ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1283-Ա « 08 » ապրիլի 2025թ.

ՄԱՐՏԻՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈԽ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱԿՈՒՄԲ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով «Հայկական ազգային կոխ ըմբշամարտի Երևանի մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի ապրիլի 4-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը և Մարտին Հակոբյանի դիմումը՝

1. Մարտին Անդրանիկի Հակոբյանին՝ 2025 թվականի ապրիլի 8-ից նշանակել «Հայկական ազգային կոխ ըմբշամարտի Երևանի մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով (08.04.2025թ.-08.04.2030թ.):
2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ